

**ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ**

Թ. Ս. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Դասական գրաբարի լեզվական համակարգի համեմատաբար քիչ ուսումնասիրված բնագավառներից է շարահյուսական մակարդակը, ուր քննության են առնվում բառերի տարաբնույթ կապակցությունների ու նախադասությունների էությունը, տեսակներն ու առանձնահատկությունները: Արդի լեզվաբանության մեջ նախադասությունն ամենից առաջ բնորոշվում է լեզվական տարբեր միջոցների օգնությամբ առարկային որոշակի հատկանիշ վերագրելու՝ ստորոգում իրականացնելու հանգամանքով, ինչպես նաև լեզվական այդ միավորի հաղորդակցական արտաբերման ընթացքում հանդես եկող յուրահատուկ արտասանական առանձնահատկությունների ամբողջության՝ հնչերանգի առկայությամբ¹:

Լեզվական յուրաքանչյուր կառուցվածքային մակարդակի միավոր, ինչպես հայտնի է, բնորոշվում է իր արտահայտության և բովանդակության պլանների (կամ ժամանակակից կառուցվածքային լեզվաբանության հիմնադիր Ֆ. դը Սոսյուրի տերմիններով՝ լեզվի նշանակող և նշանակելի կողմերի²) անխզելի միասնությամբ, որտեղ արտահայտության պլանը հաղորդակցական կենդանի գործընթացում դրսևորվող լեզվական նշանների ու միջոցների ամբողջությունն է, իսկ բովանդակության պլանը՝ այդ լեզվական միավորների արտահայտած իմաստների ամբողջությունը: Ընդսմին ուշագրավ է, որ լեզվական յուրաքանչյուր կառուցվածքային միավորի, այդ թվում՝ նախադասության արտահայտության և բովանդակային պլանները նույնական չեն և երբեմն կարող են հակադրվել միմյանց: Հայտնի է, որ խոսքին ավելի պատկերավոր և արտահայտիչ տեսք տալու նպատակով հաճախ միևնույն իմաստն արտահայտելու համար գործածվում են քերականական տարբեր միջոցներ ու ձևեր: Ինչպես դժվար չէ կռահել, խոսքը քերականական համանիշների մասին է, որոնց օգնությամբ բովանդակային միևնույն պլանի լեզվական կաղապարավորումը կարող է իրականացվել արտահայտության տարբեր՝ միմյանց նկատմամբ համանիշ հարաբերության մեջ գտնվող միջոցների օգնությամբ: Եթե նախկինում ուսումնասիրվում էր գերազանցապես բառային համանիշությունը, ապա նորօրյա ուսումնասիրություններում գերիշխող է դարձել այն մտեցումը, որի համաձայն «Համանիշությունն այժմ ըմբռնվում է ոչ միայն իբրև լեքսիկական մեկ միավորի փոխարինելի լինելը մի այլ միավորով, այլև ամեն մի ձևաիմաստային միավորի փոխարինելի լինելը մի այլ ձևաիմաստային միավորով, ըստ որում մեկ բառ կարող է փոխարինվել մեկ այլ բառով, մեկ քերականական ձևը՝ մեկ այլ քերականական ձևով (ձևաբանական ձևը՝ այլ ձևաբանական ձևով, շարահյուսական ձևը՝ այլ շարահյուսական ձևով)»³: Դա նշանակում է, որ

¹ Մասնավորապես Ս. Աբրահամյանի բնորոշմամբ՝ «...նախադասությունը ստորոգումով և հնչերանգային ավարտվածությամբ ձևավորված լեզվական նվազագույն միավոր է, որով հաղորդվում է թե՛ միտք, թե՛ խոսողի վերաբերմունքը» (Ս. Գ. Աբրահամյան, Հայոց լեզու. Շարահյուսություն, Եր., 2004, էջ 18):

² Տե՛ս Փ. Դե Սոսյուր, Курс общей лингвистики, М., 1933:

³ Պ. Մ. Պոդոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Եր., 1959, էջ 18-19:

նախադասությունները նույնպես կարող են ունենալ իրենց քերականական համարժեքները, և առարկաների ու երևույթների միջև գոյություն ունեցող միևնույն կապերն ու հարաբերությունները կարելի է արտահայտել տարբեր քերականական միջոցներով, մասնավորապես՝ տարբեր տիպի ու բնույթի նախադասություններով⁴:

Համանիշության հետ սերտորեն առնչվում է լեզվաոճական ուրույն երևույթներից մեկը՝ վերախմաստավորումը (ռուս. транспозиция, переосмысление), երբ լեզվի այս կամ այն մակարդակի կառուցվածքային միավորները ոճական առնշանակային իմաստներ արտահայտելու, խոսքին լրացուցիչ պատկերավորություն հաղորդելու համար կիրառվում են իրենց համար անսովոր, հաճախ հակադիր քերականական նշանակությամբ⁵: Նման դեպքերում առաջին հերթին գործ ենք ունենում միմյանց հետ իմաստային կամ շարույթային հարացույց կազմող լեզվական ձևերի հետ, որոնք ոճական որոշակի համատեքստում կարող են գործածվել մեկը մյուսի փոխարեն: Ահա թե ինչու վերախմաստավորումը երբեմն բնորոշվում է որպես «...լեզվական որևէ միավորի կիրառությունը հարացուցային շարքում նրա հակադիր անդամի գործառույթով⁶»: Կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ թեև բոլոր վերախմաստավորումների հետևանքով նախադասությունների արտահայտության և բովանդակության պլաններում գործ ենք ունենում համանիշ նախադասությունների հետ, սակայն ոչ բոլոր համանիշ նախադասություններն են ենթարկվում վերախմաստավորման. վերջինիս դրսևորման համար անհրաժեշտ է քերականական կառույցի ոչ թե բուն անվանողական, այլ փոխաբերական կիրառությունը:

Լեզվաբանության մեջ ձևավորվել է ավանդույթ, որի համաձայն վերախմաստավորումն ավելի շատ հարաբերվում է քերականական իրողություններին. բառային վերախմաստավորման դեպքում հիմնականում օգտագործվում է «փոխաբերություն» հասկացությունը: Սակայն այս լեզվական երևույթների էական նմանություններն այնքան ակնհայտ են, որ փորձեր են արվում «փոխաբերություն» գիտական տերմինի բառիմաստի ընդլայնման միջոցով կազմավորել ու գիտական լայն շրջանառության մեջ դնել լեզվաբանական նոր հասկացություն՝ «քերականական փոխաբերություն», որը համանիշ է համարվում «վերախմաստավորում» տերմինին: Մասնավորապես Ի. Առնոլդը հավասարապես կիրառելի է համարում այս երկու հասկացությունները, որոնք, նրա կարծիքով, նշանակում են միևնույն լեզվական իրողությունը, այն է՝ լեզվական միավորների՝ իրենց համար անսովոր քերականական նշանակությամբ գործածությունը, «...որն ստեղծում է լրացուցիչ հուզական, արտահայտչական, ոճական նրբիմաստներ⁷»:

Քերականական վերախմաստավորման հիմքում ընկած է քերականական կարգ կազմող ձևույթային-շարահյուսական հակադրությունների հարացույցում լեզվական միավորի՝ հակադիր հարացուցային քերականական իմաստով հանդես գալու ուշագրավ ունակությունը: Ինչպես հայտնի է, «Քերականական կարգը ուրիշ կարգի շիանգեցվող, բովանդակության պլանում մեկ կամ ավելի հատկանիշներով հակադրվող և ձևաբանական կամ շարահյուսական միջոցներով

⁴ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ե. Ա. Պառնասյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1970, էջ 38:

⁵ Տե՛ս Թ. Ս. Շահվերդյան, Պարզ նախադասության կազմության ոճական վերախմաստավորումը գրաբարում, «Լեզու և լեզվաբանություն», Եր., 2005, քիվ 1, էջ 28:

⁶ В. Г. Гак, Транспозиция. "Лингвистический энциклопедический словарь", М., 1990, с. 519.

⁷ И. В. Арнольд, Стилистика современного английского языка, Л., 1981, с. 57.

արտահայտվող երկու կամ ավելի քերականության ամբողջությունն է»⁸, որտեղ քերականական իմաստն ու նրա ձևական կաղապարավորումը հանդես են գալիս անքակտելի միասնականության մեջ: Մասնավորապես ձևաբանական մակարդակում բայի ժամանակային քերականական կարգն են կազմում ներկայի, անցյալի ու ապագայի իմաստ արտահայտող համապատասխան բայական ժամանակաձևերը: Ու թեև գրաբարում, ինչպես և յուրաքանչյուր քիչ թե շատ մշակված լեզվական համակարգում, բայական ամեն մի ժամանակաձև ունի իր հարաբերականորեն կայուն քերականական իմաստն ու կիրառական նշանակությունը, սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է Լ. Հովհաննիսյանը, «...երբեմն այս կամ այն քերականական ժամանակը կարող է հանդես գալ այլ ժամանակի իմաստով: Վերջին այս կիրառությունը լեզվաբանական գրականության մեջ անվանվում է ժամանակների երկրորդական, փոխաբերական կիրառություն»⁹ (ընդգծումը մերն է - Թ. Շ.):

Գրաբարի քերականական համակարգում շարահյուսական հարացույց են կազմում միակազմ, երկկազմ և թերի նախադասությունները: Նրանք արտահայտության պլանում միմյանցից առանձնանում են նախադասության գլխավոր անդամների դրսևորման առանձնահատկություններով: Երկկազմ նախադասությունը բնորոշվում է երկու բևեռների՝ ենթակայի և ստորոգյալի առկայությամբ: Մրան հակադրվում է միակազմ նախադասությունը, որը գուրկ է նման երկբևեռայնությունից¹⁰:

Պարզ նախադասության կազմության սույն քերականական հարացույցի մաս են կազմում նաև թերի (այդ թվում՝ գեղչված) նախադասությունները, որոնք հակադրվում են ինչպես միակազմ, այնպես էլ երկկազմ նախադասություններին: Ի տարբերություն վերջին տիպի նախադասությունների՝ թերի նախադասություններում նախադասության մեկ կամ մի քանի անդամներ չեն գործածվում, թեև այդ հանգամանքը չի խանգարում նախադասության իմաստի ըմբռնմանը¹¹:

Դասական գրաբարում հաճախակի են շարահյուսական այս կամ այն միավորի վերաիմաստավորման դեպքերը, երբ արտահայտման պլանում նախադասությունների տիպային հարացույցի մի տեսակին պատկանող շարահյուսական կաղապարն օգտագործվում է նրան հակադրվող հարացուցային ձևի քերականական իմաստն արտահայտելու նպատակով: Այսպես՝ լայն տարածում են գտել շարահյուսական այն կառույցները, ուր ենթակայի հետ մեկտեղ հանդես է գալիս դիմավոր բայի գործառույթ իրականացնող, բայց ձևականորեն նման ունակություններից գուրկ անկախ դերբայական միավորը՝ առանց օժանդակ բայի: Կախված դերբայի արտահայտման եղանակից՝ նման կառույցները գրաբարում երկուսն են՝ «ենթակա + անցյալ դերբայ» և «ենթակա + անորոշ դերբայ»: Այսպես՝ առաջին տիպի կառույցի գրաբարյան կիրառության նմուշներից են. «Արդ՝ ելեալ դահճապետն պարծելով՝ չարամահ անել զնա, և ետ հանել զնոսա շղթայիւք ի քաղաքէն» (Ագաթ., 111); «Ապա առնոյր Վասակ զգունդն Հայոց, և զՀոնսն հանդերձ Ալանօքն կոչել յօգնականութիւն» (Բուգ., 125): Այս օրինակներում առանց օժանդակ բայի գործածված անցյալ և անորոշ դերբայները ձեռք են բերել ինքնուրույնաբար, իրենց անդեն ձևային կաղապարով նախադասության ստորոգյալի

⁸ Գ. Բ. Джаукян, Общее и армянское языкознание, Ер., 1978, с. 113.

⁹ Լ. Շ. Հովհաննիսյան, Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 3, Եր., 1973, էջ 256:

¹⁰ Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնոսյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բաղդկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 134:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 135:

գործառույթուն կատարելու ունակություն: Անշուշտ, քերականորեն դերբայը գուրկ է նման հնարավորությունից. նախադասության ստորոգյալ կարող է դառնալ միայն խոնարհված դիմավոր բայը, սակայն մեջբերված օրինակներում գրաբարյան դերբայները կիրառվել են փոխաբերաբար, համապատասխան դիմավոր բայաձևի փոխարեն՝ բովանդակության պլանում արտահայտելով վերջինիս ժամանակային, դիմային և թվային հատկությունները:

Ընդգծված անդեմ ստորոգյալներով նախադասություններն արտահայտության պլանում միակազմ են, որովհետև ձևականորեն այստեղ ստորոգյան քերականական ակտ չի իրագործվում, այլ անցյալ և անորոշ դերբայների միջոցով ենթակային վերագրվում է ընդհանրապես գործողության հատկանիշ՝ առանց թվի, դեմքի, սեռի, կերպի, ժամանակի որոշակիացման: Բոլորովին այլ է պատկերը, սակայն, մեջբերված օրինակների բովանդակային հարթության վրա. գրաբարում «անցյալ դերբայ + ենթակա» և «անորոշ դերբայ + ենթակա» շարահյուսական կառույցները լիմաստ երկկազմ նախադասությունների ոճական իմաստ են ստանում, որովհետև ստորոգյալի գործառույթով կիրառված դերբայական ձևերը վերաիմաստավորվում են՝ ստանալով ոճական մույն համատեքստում գործառույթ մյուս դիմավոր ստորոգյալների քերականական հատկանիշները:

Արտահայտության պլանում միակազմ են ներկայանում նաև գրաբարի զեղչված գլխավոր անդամ ունեցող թերի նախադասությունները, սակայն բովանդակային պլանում նրանք մույնպես երկկազմ են. բանն այն է, որ զեղչված և ընդհանրապես թերի նախադասությունները որպես այդպիսիք, այսինքն՝ ձևականորեն որպես ոչ երկկազմ կառուցվածք ունեցող կաղապարներ կարելի է դիտել միայն ձևային, կառուցվածքային տեսակետից, քանի որ բովանդակության առումով այս տիպի նախադասությունների միտքը թերի չէ և բավարար չափով հասկացվում է¹²: Գրաբարում ընդհանրապես ենթակայի զեղչման դեպքերը սովորական ոճական երևույթ են և հանդիպում են բավական հաճախ: Այսպես՝ «Եւ եկին հասին նոքա մեծապարծ երեւելի հոգեւորագգեաց փառօք ի Հայաստան երկիրն. եւ արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչեւ ի լեառն, որ անուանեալ կոչի Առեւծ: Եւ անդ պատահեալ միմեանց մեծաւ լրջմտութեամբ, լցեալք օրհնութեամբ ողջունին, անդուստ յաշխարհն դարձան» (Բուգ., 62); « Հայոց թագաւորէ Արտաւազդ որդի Տիգրանայ: (...) Բայց այլ ոչ ինչ գործ արութեան եւ քաջութեան եցոյց. այլ ուտելեաց եւ ընպելեաց պարապեալ, մօրից եւ եղեգնապուրակաց թափառեալ շրջէր եւ առապարաց, զիշավայրիս եւ զխոզս արածելով. զիմաստութենէ եւ զքաջութենէ եւ զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, ծառայ եւ ստրուկ որովայնի արդարեւ լինելով՝ զաղբիս մեծացուցանէր» (Խոր., 137):

Համեմատաբար ավելի սակավ են գրաբարի ստորոգյալի զեղչմամբ առաջացած թերի նախադասությունները, որոնք մույնպես բովանդակային առումով երկկազմ են ներկայանում: Առանձնապես հետաքրքիր են այն դեպքերը, երբ բարդ նախադասության կազմում գտնվող համադաս պարզ նախադասություններից առաջինում զեղչված ստորոգելիական բևեռը հանդես է գալիս սոսկ երկրորդում. «Բարկութիւն հօր որդի անմիտ, եւ ցաւք են ծնանելոյ նորա» (Առակք, ԺԷ, 25): Երբեմն բայական մասը, արտահայտվելով նախադասություններից մեկում, նրան հաջորդող մի ամբողջ շարք նախադասություններում այլևս չի դրսևորվում. «Եղբորորդին իմ սպիտակ է և կարմիր՝ ընտրեալ ի բիրուց: Գլուխ նորա յոսկոյ կեփագեայ, վարսք նորա կոածոյք սեաւ իբրեւ զագազալ: Աչք նորա

¹² Տե՛ս նալսն տեղը էջ 446:

իրբու գաղաւնիս ի վերայ լիութեանց ջրոց. լուսցեալ կաթամբ, նստեալ ի վերայ ջրոց լրութեան» (Երգ երգոց, Ե, 10-13): Սակայն, անշուշտ, ամենից հաճախ թերի նախադասությունները կիրառվում են երկխոսություններում՝ գրույցն ավելի դիմանալի ու գրավիչ դարձնելու նպատակով. «Եւ ասէ Լաբան ցՅակոբ, (...) ընդէ՞ր գողացար զաստուածսն իմ: (...) Պատասխանի ետ Յակոբ եւ ասէ ցԼաբան, **Քանզի երկեայ. ասացի թէ գուցէ հանիցես զգստերս քո յինէն, եւ զամենայն քո ինչ զիմ**» (Ծննդ., ԼԱ, 31): Բերված բոլոր օրինակներում, չնայած ձևական միաբևեռայնությանը, ընդգծված նախադասությունների զեղչված անդամները հեշտությամբ վերականգնվում են բովանդակային պլանում:

Սկզբունքորեն այլ է իրավիճակը գրաբարի անվանական միակազմ նախադասությունների ոճական վերաիմաստավորման պարագայում. այս դեպքում և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններում գործ ենք ունենում միակազմ նախադասությունների հետ: Դիտարկենք հետևյալ անվանական միակազմ շարահյուսական կառույցները. «Փառք եւ պատիւ առաջի երեսաց նորա» (Մնաց., Ա, ԺԶ, 27); «Վա՛յ այնոցիկ, ընդ ոյր ձեռն գայցէ զայթակղութիւն» (Խոր., 354): Այս նախադասությունների արտահայտման պլանը միակազմ է, որովհետև, ինչպես նշում է Ս. Աբրահամյանը, նման տիպի կառույցներում նախադասության «... զվիսվոր անդամն արտահայտվում է առարկա ցույց տվող գոյականով»¹³: Իրենց բովանդակության պլանում արդեն անվանական միակազմ նախադասություններն արտահայտում են «...առարկայի եղելությունը, գոյությունը տվյալ վայրում, պայմաններում»¹⁴: Բանն այն է, որ վերաիմաստավորման արդյունքում գրաբարյան անվանական միակազմ նախադասությունների բովանդակային պլաններում հայտնվում են «են», «լինին», «եղանին» բայերի համապատասխան ժամանակի միադիմի ձևերը (է, էր, իցէ, լիցի, եղեւ և այլն), որոնք արտահայտման պլանում հանդես եկած գոյականների հետ կազմում են բաղադրյալ ստորոգյալ¹⁵: Քիչ առաջ բերված անվանական նախադասություններն իրենց բովանդակային պլաններում կունենան հետևյալ տեսքը. «Փառք և զովութիւն է առաջի երեսաց նորա», «Վա՛յ լիցի այնոցիկ, ընդ ոյր ձեռն գայցէ զայթակղութիւն»: Սակայն նույնիսկ այդպիսի բովանդակային պլանում անվանական միակազմ նախադասությունը երկկազմ չի դառնում, որովհետև էական բայերի միադիմի բայաձևը «...զուրկ է ստորոգող հատկանիշից»¹⁶ և նախադասության մեջ հանդես է գալիս միայն անվանական բաղադրյալ ստորոգյալի կազմում: Փաստորեն վերաիմաստավորված անվանական նախադասությունը նորից միակազմ է, քանզի այստեղ առկա է միայն ստորոգյալի բևեռը (մեր օրինակներում՝ «Փառք եւ զովութիւն է » և «Վա՛յ լիցի» անվանական ստորոգյալները), իսկ ենթական բովանդակային պլանում չի դրսևորվում:

Գրաբարի որոշ ընդհանրական-միակազմ նախադասությունների արտահայտության պլանում կարող է լինել «դու, դուք, մարդ» ձևական ենթակա. նման կառույցները ձևականորեն երկկազմ են: Այսպես՝ «Մարդ ստրկանայ՝ յորժամ օտարանայցէ յիւրմէ տեղոյ» (Առակք, ԻԷ, 8): ճիշտ է, բովանդակության պլանում նրանք շարունակում են պահպանել իրենց երկկազմ բնույթը, սակայն նրանց

¹³ Նույն տեղում, էջ 496:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Գրաբարի անվանական ու ընդհանրապես միակազմ նախադասությունների, նրանց արտահայտման ու բովանդակության պլանների դրսևորման առանձնահատկությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Պ. Կ. Խաչատրյան, Գրաբարի միակազմ նախադասությունները, Եր., 2002:

¹⁶ Պ. Կ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 90:

ենթական ենթարկվում է ձևաբանական վերափոխման, քանզի նրա դիմային արտահայտությունը այդպիսի շարահյուսական կառույցներում փոխաբերական բնույթ ունի և բովանդակության պլանում վերաբերում է ոչ թե եզակի ու հոգնակի երրորդ դեմքին կամ ստույգ մարդկանց, այլ ունի ընդհանրական նշանակություն: Ինչ վերաբերում է անորոշ-դիմավոր և ձևական-դիմավոր (կամ միադիմի բայաձևով արտահայտվող) միակազմ նախադասություններին, ապա նրանք և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններում, որպես կանոն, միակազմ են¹⁷:

Անորոշ դերբայով կազմված բայական միակազմ նախադասությունները գրաբարում արտահայտման պլանում ենթակա չունեն, իսկ ստորոգյալի բևեռը դրսևորվում է մասնակիորեն, անորոշ դերբայի միջոցով, որը ձևաբանորեն զուրկ է ստորոգում իրականացնելու հնարավորությունից. այսպես՝ «**Ճանաչել** զիմաստութիւն եւ զխրատ, **իմանալ** զբանս հանճարոյ» (Առակք, Ա, 1); «**Մի՛ տալ** զժողովորդսն ի ձեռս անաստուած հեթանոսաց» (Բուգ., 163): Այս տիպի նախադասությունները, ուղեկցվելով համապատասխան հնչերանգով, բովանդակության պլանում հիմնականում արտահայտում են հրաման, հորդոր, պահանջ, առաջարկություն և ըմբռնվում են որպես երկկազմ նախադասություններ՝ ուղղված մեկ կամ մի քանի անձանց և ըստ այդմ ունենալով եզակի կամ հոգնակի թվով դրված ենթակա: Մեր օրինակներում նախադասությունների բովանդակային պլանները այսպիսի տեսք ունեն. «**Ճանիցե՛ք** (ծանի՛ր) զիմաստութիւն եւ զխրատ, **իմացարու՛ք** (իմացի՛ր) զբանս հանճարոյ», «**Մի՛ տուր** (մի՛ տուք) զժողովորդսն ի ձեռս անաստուած հեթանոսաց»:

Դասական գրաբարում շարահյուսական հարացույց են կազմում նաև հաստատական և ժխտական նախադասությունները: Թեև հաստատական նախադասություններն առաջին հերթին կիրառվում են որևէ իրողություն կամ երևույթ հաստատելու, իսկ ժխտական նախադասությունները՝ իրենց կազմության մեջ առկա ժխտական խոնարհման բայով արտահատված ստորոգյալի օգնությամբ դրանք բացասելու նպատակով, սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է Ռ.Իշխանյանը, ժխտական բովանդակություն ունեցող ամեն մի նախադասություն չէ, որ քերականորեն կարող է համարվել ժխտական նախադասություն¹⁸: Ինչպես և բազմաթիվ լեզուներում, գրաբարում նույնպես առանձին դեպքերում, մասնավորապես՝ ոճական նպատակներով հաստատական իմաստ կարելի է արտահայտել ժխտական շարահյուսական կառույցների օգնությամբ և ընդհակառակը: Վաղուց արդեն գաղտնիք չէ, որ ձևով հաստատական նախադասությունը կարող է օգտագործվել բովանդակային պլանում ժխտում արտահայտելու նպատակով, և ընդհակառակը՝ կան ձևով ժխտական լեզվաշարահյուսական կաղապարներ, որոնց բովանդակությունը հանգում է հաստատական նախադասության:

Ժխտական նախադասությունների միջոցով գրաբարում հաստատական նրբիմաստ արտահայտվում է մի քանի եղանակով: Համեմատաբար պարզ կառուցվածք ունեն այն վերափոխադարձվող նախադասությունները, որոնց կազմում ժխտական բայի կամ մասնիկի հետ համաժամանակ հանդես են գալիս քերականական այնպիսի միավորներ, որոնք հակադրվում են ժխտական բայաձևով ստորոգյալի քերականական իմաստին՝ նրան բովանդակային պլանում հաստատական երանգ վերագրելով: Այսպես, «Յիսուս՝ ասէ ցնա. զի՞ ասես զիս բարի. *չիք որ բարի՝ բայց մի Աստուած Հայր*» (Դուկ., ԺԸ, 19): Ընդգծված նախադասությունում

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 25-167:

¹⁸ Տե՛ս Ռ. Ա. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն, Եր., 1986, էջ 69:

«Չիք որ բարի» նախադասության ժխտական բովանդակությանը հակադիր իմաստ է հաղորդում «բայց» նախադրությունը, որը, ի տարբերություն համանուն և ներհակական իմաստ արտահայտող «բայց» համադասական շաղկապի, այս համատեքստում կիրառվել է «բացի» կապական ձևաիմաստով՝ բովանդակային պլանում հաստատական բնույթ հաղորդելով այս լեզվական կառույցին. «Յիսուս՝ ասէ ցնա. զի՞ ասես զիս բարի. միայն մի Աստուած Հայր է բարի»: Երբեմն «բայց» կապական բառի փոխարեն միևնույն լեզվաոճական գործառույթով գործածվում է վերջինիս «բաց» շարահյուսական համանիշը. այսպես՝ «Եւ մատուցեալ բազում աղօթիք խնդրածոց հայցեր ի Տէր Աստուած Իսրայելի՛» եւ ասէր. Տէր իմ եւ թագաւոր մեր, դու միայն օգնեա ինձ միայնումս. որ ոչ ունիմ ինձ օգնական բաց ի քէն» (Եսթեր, ԺԴ, 3):

Բացառման քերականական իմաստ արտահայտող մյուս կապական միավորները նույնպես ունակ են մնամատիպ ոճական-շարահյուսական վերաիմաստավորման գործառույթի նախապայման հանդիսանալ՝ անշուշտ, նախադասության ստորոգելիական գլխավոր անդամի ժխտական կառուցվածքի պարագայում: Այսպես. «Եւ նոքա են որ առնեն զհանդերձս արանց, եւ նոքօք զարդարին եւ փառատրի մարդիկ. եւ ոչ է հնար առանց նոցա լինել մարդկան» (Եզր., Դ, 17) կառույցում ընդգծված ժխտական նախադասության իմաստը նույնպես բովանդակային պլանում հակադիր նշանակություն է ստանում «առանց» բացառման կապի քերականական գործառույթյան շնորհիվ («Միայն նոքօք է հնար լինել մարդկան»):

Համեմատաբար պարզ վերաիմաստավորված շարահյուսական կառույցներից է նաև նվազասույթը (ռուս. *много*)՝ լեզվաոճական այն արտահայտչամիջոցը, որն այս կամ այն հատկանիշի ձևական ժխտման միջոցով հաստատագրում է հակիմաստ հատկանիշի առկայությունը («ոչ գեղեցիկ» – «տգեղ», «ուչ վատ» – «լավ»): Այս շարահյուսական հնարն անհրաժեշտ է տարբերակել նվազաբանությունից. վերջինս բառային պատկերավորման միջոց է, չափազանցության հակառակ երևույթը, երբ բառային միջոցների օգնությամբ թուլացվում, նվազեցվում է ներկայացվող առարկայի այս կամ այն հատկանիշը: Ի տարբերություն նվազաբանության՝ նվազասույթն ունի միանգամայն որոշակի շարահյուսական կառուցվածք՝ «ժխտական մասնիկ+հատկանիշ արտահայտող բառ», այդ պատճառով այն պատկանում է շարահյուսական արտահայտչամիջոցների թվին¹⁹: Գրաբարում այս վերաիմաստավորման եղանակը հաճախակի է կիրառվել. այսպես՝ «Ոչ է բարուք լուրն զոր ես լսեմ» (Թագ., 1, Բ, 24); «Չէ բարի բանդ զոր արարեր» (Թագ., 1, ԻԶ, 16); «Ոչ է ծառայ մեծ քան զտեր իւր» (Յովհ., ԺԳ, 16); «Անառակ է զինի՛ եւ թշնամանող արբեցութիւն. եւ ամենայն որ խառնակի ընդ նոսա՝ չէ իմաստուն» (Առակք, Ի, 1): Բովանդակային պլանում մեջբերված նվազասույթները վերածվում են միանգամայն հաստատական նախադասությունների, որտեղ ժխտական մասնիկը կորչում է, իսկ հատկանիշ արտահայտող բառի փոխարեն հանդես է գալիս նրա հականիշը. «Չար է լուրն զոր ես լսեմ», «Փոքր է ծառայ քան զտեր իւր»: Չնայած երկու տարբերակների բովանդակային հարթությունների նույնականությանը՝ նվազասույթներն ավելի արտահայտիչ ու պատկերավոր են հաղորդում հեղինակի միտքը, քան նրանց վերաիմաստավորված կառույցները: Հետաքրքիր է, որ գրաբարում ոճական կրկնության նպատակով այս տարբերակները երբեմն հանդես են գալիս համատեղ՝ միևնույն նախադասության կազմում. «Գործակից է առն իւրում ամենայն բարեաց կենաց՝ եւ ոչ չարեաց» (Առակք, ԼԱ, 12); «Առեալ զկրակարանն՝ վարեցին ի ջուրսն զկրակսն, որպէս ի գիրկս եղբօր,

¹⁹ Նվազասույթի մասին ավելի մանրամասն տե՛ս **М. Д. Кузнец, Ю. М. Скребнев, Стилистика английского языка, Л., 1960:**

ըստ ասելոյ սուտ վարդապետացն Պարսից. գոր ըմբռնեալ ջրոցն *բշնամաբար եւ ոչ եղբայրաբար* ծախեցին» (Փարպ., 63):

Հաստատական լեզվաոճական նրբիմաստ արտահայտելու համար գրաբարում լայնորեն կիրառվել են ժխտական բաղադրիչներով բարդ ստորադասական նախադասություններ, որտեղ կրկնակի ժխտման հետևանքով ուրվագծվում է ողջ բարդ նախադասության դրական բովանդակությունը: Այսպես՝ «Բայց այս ազգ ոչ ելանէ. եթէ ոչ՝ աղօթիք եւ պահովք» (Մատթ., ԺԷ, 20): Արտահայտման պլանում գործ ունենք մի բարդ ստորադասական կառույցի հետ, որտեղ երկրորդական նախադասության մեջ նշվում է այն պայմանը, որի իրագործման դեպքում հնարավոր է դառնում գլխավոր նախադասությունում նկարագրվող գործողության իրականացումը: Դժվար չէ նկատել, որ սուկ ձևական տեսանկյունից է այս բարդ քերականական ամբողջությունը ժխտական տեսք ստացել, իսկ բովանդակային պլանում այն միանգամայն հաստատական պարզ նախադասություն է՝ «բայց այս ազգ միայն աղօթիք եւ պահովք ելանէ»: Թեև շարահյուսական համանիշներ հանդիսացող այս երկու նախադասությունները արտահայտում են միևնույն բովանդակությունը, սակայն լեզվաոճական արտահայտչականության, հաղորդակցման գործընթացում ներազդելու ունակության դիտանկյունից նրանք զգալիորեն տարբերվում են միմյանցից. առաջին կառույցը երկրորդի համեմատությամբ ավելի արտահայտիչ ու ազդեցիկ է՝ շնորհիվ նրանում առկա ժխտական նախադասությունների կիրառության, որոնց իմաստը բովանդակային պլանում կարելի է արտահայտել «միայն» սահմանափակման եղանակավորիչ պարունակող պարզ նախադասությամբ: Ահա մնամատիպ կառույցի այլ օրինակ. «Ոչ ոք գիտէ զՀայր՝ եթէ ոչ Որդի, որպէս եւ զՈրդի ոչ ոք գիտէ՝ եթէ ոչ Հայր» (Ագաթ., 424):

Ավելի բարդ շարահյուսական կառույցներում ժխտական կառուցվածքի բարդ ստորադասական նախադասությանը բովանդակության պլանում մույմպես համապատասխանում է բարդ ստորադասական, բայց արդեն դրական կաղապարավորում ունեցող նախադասություն. «Եթէ ոք՝ գայ առ իս, եւ ոչ ատեայ զհայր իւր եւ զմայր, եւ զկին եւ զորդիս, եւ զեղբարս եւ զքորս, նա՝ եւ զանձն եւս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել» (Դուկ., ԺԳ, 26): Սրան իմաստային առումով շարահյուսորեն համապատասխանում է «Եթէ ոք՝ գայ առ իս, եւ ատեայ զհայր իւր եւ զմայր, եւ զկին եւ զորդիս, եւ զեղբարս եւ զքորս, նա՝ եւ զանձն եւս իւր. կարէ իմ աշակերտ լինել» հաստատական նախադասությունը: Նման կերպ է վերաիմաստավորման ենթարկվում նաև հետևյալ նախադասությունը. «Եւ նա՝ ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ ոք է՝ որ եթող գտունս, կամ զմնօղս, կամ զեղբարս, կամ զկին, կամ զորդիս՝ վասն արքայութեան Աստուծոյ, եթէ ոչ առնուցու բազմապատիկ ի ժամանակի յայսմիկ» (Դուկաս, ԺԸ, 29):

Բացի կրկնակի ժխտման եղանակից՝ գրաբարի բարդ նախադասություններում առկա է մեկ այլ շարահյուսական կաղապար, որի օգնությամբ վերամաստավորվում է ողջ նախադասության արտահայտած իմաստը. այն հանդես է գալիս «ոչ (չէ)... մինչեւ...» կաղապարով: Այս դեպքում համադաս նախադասություններից մեկում ժխտվում է որևէ գործողության կամ հատկանիշի առկայությունը, այնինչ մյուս նախադասության մեջ մատնանշվում են հանգամանքներ, որոնց առկայության դեպքում նախորդ նախադասության բովանդակությունը զրկվում է ժխտական իմաստից: Այսպես. «Ոչ թողից զքեզ մինչեւ արարից զամենայն ինչ գոր խօսեցայ ընդ քեզ» (Ծննդ., ՀԸ, 15); «Եւ է երբեք զի մին փախուցեալ երթայցէ անձնապուր ուրեք զկեանս անձինն շահել. և միսն ցասամբ բորբոքեալ՝ սրով զկնի ընթացեալ. ոչ դադարէ՝ մինչեւ յագեցուցանէ զցասումն» (Եզն., 19): Մեջբերված օրինակներից ակնհայտ է, որ առաջին նախադասություններում դրսևորվող ժխտական բովանդակությունը որոշակի պայմանների առկայության դեպքում կորցնում է իր շարահյուսական բացասման իմաստը:

Գրաբարի քերականական համակարգում ուշագրավ դերակատարում է հանդես բերում «մինչև» («մինչ չե») շաղկապական միավորը, որն ունի բարդ կառուցվածք և ձևականորեն իր մեջ ժխտական մասնիկ է պարունակում (մինչ + չէ, մինչ + ոչ): Այս հանգամանքի շնորհիվ «մինչև»-ը հաճախ է կիրառվում կրկնակի ժխտման միջոցով դրական վերախմաստավորման ոճական գործառույթի իրականացման նպատակով: Այսպես՝ «Ոչ են կամք իմ ի դոսա, մինչևե խաւարեալ իցեն արեգակն՝ եւ լոյս՝ եւ լուսին՝ եւ աստեղք, եւ դարձցին ամպք գկնի անձրեւաց» (Ժող., ԺԲ, 2); «Ոչ կոչեն գՏուբիա գորդի իմ, եւ ցուցանեն նմա զամենայն մինչևե մեռեալ իցեն» (Տովբիթ, Գ, 1): Դժվար չէ նկատել, որ այսպիսի շարահյուսական կառույցները, արտահայտման պլանում իրենց մեջ կրկնակի ժխտական համադասական մախադասություններ պարունակելով, բովանդակային պլանում ներկայանում են որպես հաստատական բնույթի բարդ ստորադասական մախադասություններ:

Մինչ այժմ հիմնականում դիտարկում էինք գրաբարի ժխտական մախադասությունների վերախմաստավորման դեպքերը, որոնց արդյունքում այդ շարահյուսական կառույցները հաստատական երանգ էին ստանում: Սակայն գոյություն ունի նաև հակառակ երևույթը, երբ հաստատական մախադասություններն են հիմք ծառայում ժխտական բովանդակային նրբիմաստներ արտահայտելու համար: Ինչպես իրավացիորեն նկատել է Ն. Պառնասյանը, երբ հեղինակը նկարագրում է անցյալում տեղի չունեցած, սակայն իր համար ցանկալի երևույթներ ու գործողություններ, դրական բայ-ստորոգյալի օգնությամբ կարող է ժխտական մախադասության իմաստ արտահայտել²⁰: Մասնավորապես դասական գրաբարում այդ նպատակով հաճախ կիրառվում է «երանի» զգացական եղանակավորիչը, որի օգնությամբ, խոսելով անցյալի իրադարձությունների մասին, խոսողը անուղակիորեն մատնանշում է դրանց չիրականացված լինելու հանգամանքը: Այսպես. «Երանի թէ կարէի զանձն իմ վարժել» (Յովք, Լ, 24)՝ բովանդակային պլանում համարժեք է «Ոչ կարեցի զանձն իմ վարժել» մախադասությանը: Նմանատիպ այլ օրինակներ. «Երանի թէ թագաւորէիք» (Թուղթ առ Կորնթ., Դ, 8); «Երանի թէ մօտակաւոր իսկ լինեիմ» (Թուղթ առ Գաղ., Ե, 12):

Շարահյուսական ուշագրավ հարացույց են կազմում նաև միմյանցից ըստ հնչերանգի (նպատակի) տարբերվող պատմողական, հրամայական, հարցական, բացականչական մախադասությունները: Թեև նրանցից յուրաքանչյուրն ունի իր քերականական դրսևորման առանձնահատկությունն ու կիրառության օրինաչափությունները, սակայն շատ դեպքերում հեղինակները դրանք նույնպես գործածում են փոխաբերաբար՝ հարացույցի մյուս անդամի շարահյուսական գործառույթով:

Քերականական այս հարացույցում վերախմաստավորվելու տեսանկյունից ամենից ավելի լայն տարածում են գտել հռետորական հարցական մախադասությունները, որոնք սոսկ արտահայտման տեսանկյունից են հարցական, այնինչ բովանդակային առումով ներկայանում են իբրև սովորական պատմողական մախադասություններ: Շարահյուսական այս կառույցի կազմում հաճախ հանդես է գալիս այս կամ այն հարցական դերանունը, որի հնչերանգի միջոցով էլ մախադասությունն արտահայտման պլանում ներկայանում է իր հարցական բնույթով: Այսպես. «Ո՞ր մարդ է յերկրի, եթէ կարող է ընդդէմ դառնալ քում հրամանիդ» (Եղ., 42); «Զի՞նչ իցէ մեծագոյն քան զիմաստութիւն, որ զամենայն առնէ» (Իմաստ. Սողոմոնի, Ը, 5); «Ո՞ր ուրուք ի ձէնչ էշ կամ եզն անկանիցի ի ջրհոր, եւ ոչ վաղվաղակի հանիցէ զնա յատր շաբաթու» (Ղուկ., ԺԴ, 5): Ձևով հարցական հաստատական այս բոլոր մախադասություններին բովանդակային պլանում համապատասխանում է

²⁰ Տե՛ս Ն. Ա. Պառնասյան, Շարահյուսական համանիշնեքը ժամանակակից հայերենում, Եր., 1970, էջ 82:

որևէ պատմողական ժխտական բնույթի նախադասություն. «Ոչ ոք է յերկրի, եթէ կարող է ընդդէմ դառնալ քում հրամանիր», «Ոչ ինչ իցէ մեծագոյն քան զհմաստութիւն, որ զամենայն առնէ» :

Ընդհանրապէս հոետորական նախադասությունների առանձնահատկությունն այն է, որ այստեղ գործ ունենք կրկնակի վերախմաստավորման՝ հազվադեպ հանդիպող երևույթի հետ. քերականական փոխաբերության կիրառման շնորհիվ շարահյուսական կառույցը վերախմաստավորման է ենթարկվում իր երկու պարամետրերով՝ ըստ նախադասության երանգի (հարցական նախադասությունը վերախմաստավորվում է պատմողականի) և ըստ գործողության կամ հատկանիշի հաստատման/ժխտման (հաստատական նախադասությունը վերախմաստավորվում է ժխտականի և ընդհակառակը): Բացառություն են կազմում այն հոետորական նախադասությունները, որտեղ գործողություն կատարող սուբյեկտը ենթադրաբար հայտնի է բոլորին. նման դեպքերում վերախմաստավորման հետևանքով հաստատական հարցական նախադասությունն ընթռնվում է որպէս պատմողական, սակայն նույնպէս հաստատական կառուցվածք ունեցող նախադասություն. օրինակ՝ «Ո՞չ չափեաց ափով իւրով գջուրս եւ զերկինս թգաւ. եւ զերկիր ամենայն՝ քլաւ: Ո՞ կշոեաց զերինս կշոով. եւ զդաշտս՝ կշորոջ» (Եսայի, Խ, 12-13): Ռճական համապատասխան համատեքստում ենթադրվում է, որ բոլոր ունկնդիրներն էլ հասկանում են, որ խոսքը ամենակարող Աստծո մասին է: Ու թեև հոետորական հարցը պատասխան ամենևին չի ակնկալում, սակայն ուշագրավ է, որ երբեմն հոետորական հարցին անմիջապէս հետևում է պատասխանը, որը կարծես կրկնում է հոետորական հարցի վերախմաստավորված շարահյուսական կառույցի բովանդակային իմաստը: Այսպէս՝ «Ո՞վ ետ ի յափշտակութիւն զՅակովբ. եւ զԻսրայէլ՝ աւարառուաց. ո՞չ ապաքէն Աստուած» (Եսայի, ԽԲ, 24):

Գրաբարում հոետորական հարցն իր արտահայտման պլանում կարող է դրսևորվել նաև առանց հարցական դերանվան, սոսկ համապատասխան հնչեքանգի առկայության միջոցով. այդ դեպքում նույնպէս տեղի է ունենում կրկնակի վերախմաստավորում, որի հետևանքով հարցական հնչեքանգը վերանում է, իսկ հաստատական / ժխտական ստորոգյալը վերածվում է իր հարացուցային հակադրությանը: Այսպէս. «Եւ մնացորդք բանից Աբիայ՝ եւ ամենայն ինչ զոր արար. ո՞չ աւանիկ գրեալ են ի գիրս բանից աուրց թագաւորացն Յուդայ: Եւ պատերազմ էր ի մէջ Աբիայ եւ ի մէջ Յերոբովամայ» (Թագ., 3, ԺԵ, 7) ; «Իսկ արդ մեք առանց Տեա՞նն եկեալ իցեմք» (Եսայի, ԼԶ, 10): Հոետորական նախադասությունը գրաբարում ունի արտահայտման մի շարք այլ ուշագրավ առանձնահատկություններ և, որոնց կանդրադառնանք մեկ այլ առիթով:

Գրաբարի վերախմաստավորվող շարահյուսական կառույցներից են նաև հոետորական բացականչական նախադասությունները, որոնք խոսքին առանձնակի հուզականություն և արտահայտչականություն են հաղորդում: Ինչպէս և հոետորական հարցական նախադասությունների դեպքում, հոետորական բացականչական նախադասությունները վերախմաստավորման հետևանքով բովանդակային պլանում վերածվում են պատմողական նախադասության՝ առանց հուզական-բացականչական հնչեքանգի: Այսպէս. «Զի՞ գեղեցիկ են տունք քո, Յակոբ» (Թիւք, ԻԴ, 5); « Զի՞ սքանչելի է անուն քո յամենայն երկրի» (Մաղմ., Ը, 2); «Որդեակք, որչա՞փ դժուարին է յուսացելոց մտանել յարքայութիւն Աստուծոյ» (Մարկ., Ժ, 24): Բերված բոլոր օրինակներում հարաբերական դերանունները բովանդակության պլանում փոխարինվում են «յոյժ», «կարի», «աստիկ» սաստկական մակբայներով:

Ուշագրավ են նաև դասական գրաբարում համեմատաբար ավելի հազվադեպ կիրառություն ունեցող հրամայական նախադասությունների վերախմաստավորումները: Ոսկեդարյան հայերենի շարահյուսական կաղապարներում կարելի է հանդիպել արտահայտման պլանում հրամանի, հորդորի, խորհուրդի ձևական

իմաստ ունեցող նախադասությունների, որոնք բովանդակության պլանում զբրկվում են հրամայական հնչերանգից և վերածվում են պատմողական նախադասությունների: Այդ երևույթը ամենից հաճախ տեղի է ունենում այնպիսի բարդ նախադասությունների գործածման պարագայում, որոնց բաղադրիչը կազմող առաջին մեկ կամ մի քանի նախադասությունները ձևով հրամայական են, իսկ վերջինը՝ ապառնի ժամանակով պատմողական նախադասություն, ընդ որում այս երկու բևեռների միջև առկա է պայմանի իմաստային որոշակի քերականական կապակցություն: Ահա մի քանի օրինակ. «Որդեա՛կ իմ, զկեանս քո հեզութեամբ անցո՛, և ընդունելի մարդոյ սիրելի լիցիս» (Միրաք, Գ, 19); «Լե՛ր իբրեւ զհայր որբոց, եւ եղիցիս որդի բարձրելոյն» (Միրաք, Դ, 10); «Խնդրեա՛ դու եւ քննեա՛ եւ յայտնեա՛ ի քեզ. եւ ի վախճանի գոցես զհանգիստ նորա» (Միրաք, Զ, 28-29):

Բերված բոլոր օրինակներում արտահայտության պլանում հրամայական նախադասությունների տեսքով հանդես եկող շարահյուսական կառույցները բովանդակային պլանում դառնում են պատմողական նախադասություններ. բանն այն է, որ իմաստով դրանք հրաման, հորդոր չեն արտահայտում, այլ նշում են այն պայմաններն ու հանգամանքները, որոնց իրականացման պարագայում կարող է տեղի ունենալ ապառնի ժամանակաձևով գործածված ստորոգյալ ունեցող նախադասության մեջ նախանշված գործողությունը: Այլ կերպ ասած՝ բովանդակային պլանում հիշատակված ողջ շարահյուսական կառույցը ներկայանում է որպես պայմանի պարագա ստորադասական նախադասություն, որտեղ գերադասա նախադասության գործողության իրականացման համար նշվում են մեկ կամ մի քանի պայմաններ, որոնք արտահայտվում են հրամայական նախադասությունների կաղապարավորմամբ: Արդյունքում, ինչպես և արդեն հիշատակված հոետորական հարցերի որոշ դրսևորումներում, հանդիպում ենք կրկնակի վերաիմաստավորման ուշագրավ երևույթին. վերջին օրինակներում մի կողմից վերաիմաստավորման են ենթարկվում ըստ երանգի միմյանց հետ հարացուցային հակադրության մեջ գտնվող հրամայական և պատմողական նախադասությունները, մյուս կողմից՝ բարդ նախադասության կազմում մույպես միմյանց հետ որոշակի հարացուցային հարաբերություն ունեցող համադասական և ստորադասական նախադասությունները: Այսպիսի կրկնակի վերաիմաստավորման արդյունքում հեղինակի խոսքն ստանում է բացառիկ արտահայտչականություն և պատկերավորություն:

Սույն հետազոտության արդյունքները վկայում են, որ դասական գրաբարում լայն կիրառություն են ստացել շարահյուսական փոխաբերությունների ամենատարբեր եղանակներ ու միջոցներ: Իմաստային կամ շարությային հարացույց կազմող լեզվական ձևերը, ոճական համատեքստում գործածվելով մեկը մյուսի փոխարեն, քերականական վերաիմաստավորման արդյունքում լրացուցիչ զգալի առնչանակային իմաստներ են հաղորդել մեսրոպյան շրջանի հայոց լեզվին:

Т. С. ШАХВЕРДЯН - *Транспозиция предложения и её особенности в древнеармянском языке.* - В статье рассматриваются проблемы специфики и особенностей синтаксической транспозиции, анализируются основные виды синтаксических транспозиций. Как известно, при транспозиции происходит переосмысление элементов разных уровней языка. Среди транспозиций особое распространение получил риторический вопрос - вопросительная по форме, но поветствовательная по содержанию синтаксическая структура. В статье показывается, что формально односоставное предложение в древнеармянском языке часто в содержательном аспекте является двусоставным. Рассматриваются также основные типы транспозиций утвердительных и отрицательных предложений в древнеармянском языке.